ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ. ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՓՈԽՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՐՀԸ

§ 8. 1789 թ. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1

«Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը»

Ազգային ժողովը գերագույն էակի առջև ու հովանավորության ներքո ճանաչում և հրապարակում է մարդու և քաղաքացու հետևյալ իրավունքները.

1. Մարդիկ ծնվում են ազատ և իրավահավասար: Հասարակական տարբերությունները կարող են հիմնվել միայն ընդհանուր շահի վրա:

2. Ամեն մի քաղաքական միության նպատակը մարդու բնական և անկապտելի իրավունքների պաշտպանությունն է: Այդ իրավունքներն են. ազատությունը, սեփականությունը, անվտանգությունը և ճնշմանը դիմադրելը:

3. Ամբողջ գերագույն իշխանության աղբյուրը մշտապես գտնվում է ազգի մեջ: Ոչ մի հիմնարկություն, ոչ մի անձնավորություն չեն կարող իրագործել այն իշխանությունը, որը անմիջականորեն չի բխում ազգից:

4. Ազատությունը այն ամենը անելու իրավունքն է, որը չի վնասում ուրիշներին...

6. Օրենքը ընդհանուրի կամքի արտահայտությունն է... օրենքը պետք է հավասար լինի բոլորի համար...

10. Ոչ ոքի չպետք է անհանգստացնել իր սեփական, նույնիսկ կրոնական համոզմունքների համար, եթե դրանց դրսևորումները չեն խախտում օրենքով սահմանված հասարակական կարգը...

18. Քանի որ սեփականությունը անխախտելի ու սուրբ իրավունք է, ապա ոչ ոք չպետք է զուրկ լինի դրանից, բացի այն դեպքերից, երբ այդ է բացահայտորեն պահանջում հասարակական անհրաժեշտությունը, օրինականորեն հաստատված է և արդարացի ու նախնական վարձատրման պայմանով է: